Digitally signed by HAYRAPETYAN HRACHUHI 5607810178
Date: 2023.04.10 11:47:26 MSK

7-րդ դասարան 2ժամ

ՇԱԲԱԹ	§	ԹԵՄԱ	ԺԱՄԱՔԱՆԱԿ
1	12-13	-Բնական պայման և բնական ռեսուրս: Բնական ռ-ի խմբ. -Աշխարհի բնական ռ-ի տեղաբաշխումը	1
ԲԱԺԻՆ 5. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ			
2	14, 15	- Ազգային տնտեսություն - Տնտեսության տեղաբաշխումը. աշխատանքի աշխարհագրական բաժանում	1
		<u>Ինքնուրույն աշխատանք</u> > *Ի՞նչ է տնտեսությունը և ո՞ր ցուցանիշերով են արտահայտում դրա զարգացման մակարդակը: Բերել աշխատանքի աշխարհագրական բաժանման օրինակներ, ներկայացնել համաշխարհային տնտեսության ճյուղային կառուցվածքը և նշել դրա ձևավորման 3 գլխավոր նախադրյալները: Բիզնես նախագծի մշակման ժամանակ տնտեսության տեղաբաշխման ո՞ր գործոն(ներ)ին առավել ուշադրություն կդարձնեք և ինչո՞ւ*	1
3-4-5	16, 17,18	-Համաշխարհային տնտեսություն - Արդյունաբերություն. Ընդհանուր բնութագիրը և տեղաբաշխումը - Վառելիքաէներգետիկ արդյունաբերություն	1
		<u>Ինքնուրույն աշխատանք</u> > *Աղյուսակի միջոցով ներկայացնել արդյունաբերության հին, նոր և նորագույն ճյուղերը: Ի՞նչ է պայմանական վառելիքը: Նկարագրել վառելիքաէներգետիկ արդյունաբերության ճյուղային կառուցվածքը: Դուրս գրել և ուրվագծային քարտեզի վրա նշել ածխով, նավթով, գազով, ուրանով հարուստ և էլեկտրաէներգիա արտադրող խոշոր երկրները: Համեմատելով այլ երկրների հետ, ձեր կարծիքով որպես էլեկտրաէներգիա արտադրող երկիր Հայաստանն ինչ ռազմավարություն պետք է մշակի առավել մրցակցային դառնալու համար*	1

6-7	19, 20	- Մետաղաձուլություն և մեքենաշինություն - Արդյունաբերության այլ ճյուղեր (քիմիական, թեթև և սննդի)	1
		<u>Ինքնուրույն աշխատանք</u> > *Աղյուսակով նշել սև և գունավոր մետաղները: Ծանոթանալ դրանց ձուլման ընթացակարգին: Հակիրճ բնութագրել մեքենաշինության դերը տնտեսության մեջ: Ի՞նչ տեղի կունենար, եթե անհետանային մեքենաները: Գրել ձեր իմացած մեքենաների մակնիշները և դրանք արտադրող*	1

		երկրները: Գծապատկերով ներկայացնել քիմիական, թեթև և սննդի արդյունաբերության ճյուղերը	
8-9	-	***- Ամփոփում*** ***-Թեմատիկ գրավոր աշխատանք***	1
		Ինքնուրույն աշխատանք > *Ձեր բնակավայրում կամ հարակից տարածքներում ինչ արտադրամասեր, գործարաններ կան: Ձեր կարծիքով ինչո՞վ է պայմանավորված դրանց տեղաբաշխումն այդ վայրում: Ուսումնասիրեք աշխարհում հայտնի արտադրատեսակներից մեկի պատմությունը, ներկայացրեք համառոտ: Դուք ինչ արտադրություն կկազմակերպեիք*	1
10	21	- Գյուղատնտեսություն	1
		Ինքնուրույն աշխատանք > *Ներկայացնել գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքը: Ձեր կարծիքով դրա զարգացման ուղղություններից ո՞րն է առավել հեռանկարային և ինչու՞: Որո՞նք են գյուղատնտեսության հիմնական սպառնալիքները: Առանձնացրեք գյուղատնտեսությամբ առաջատար երկրները և նշեք ուրվագծային քարտեզի վրա: Դպրոցում կամ դասարանում ստեղծեք «ագրոանկյուն», փոքրիկ ծավալներով աճեցնելով մշակաբույսեր*	1
11-12	22, 23, 24	- Բուսաբուծություն - Անասնապահություն - Ձկնորսություն և ձկնաբուծություն, անտառային տնտեսություն և որսորդություն	1
		Ինքնուրույն աշխատանք > *Գծապատկերել բուսաբուծության և անասնապահության ճյուղային կառուցվածքը: Կազմել «համեղ աղյուսակներ», ներկայացնելով մշակաբույսերի աշխարհագրական տարածումը և անասնապահության գլխավոր շրջանները: Ուսումնասիրեք որևէ սննդամթերքի անցած ուղին՝ դաշտից մինչև ճաշի սեղան: Ի՞նչ են տալիս անտառն ու օվկիանոսը մարդուն: Հատապտուղներ և մրգեր հավաքեք, դպրոցում չիր պատրաստելու համար*	1
13-14	25, 26	- Տրանսպորտ և կապ - Տրանսպորտային միջազգային գլխավոր ուղիները	1
		Ինքնուրույն աշխատանք > *Որո՞նք են տրանսպորտի և կապի տեսակները: Նշեք դրանց զարգացման մակարդակը բնութագրող ցուցանիշները: Կատարեք դասագրքում տրված 4-րդ առաջադրանքը (էջ 136): Ուսումնասիրեք, թե ո՞ր երկրներն ունեն աշխարհում լավագույն տրանսպորտային համակարգ: Համեմատեք և նշեք առաջարկներ, թե տրանսպորտային ու կապի*	1

		ինչպիսի բարեփոխումներ կցանկանաք կատարել ձեր բնակավայրում	
15-16	27	- Տնտեսության սպասարկման ոլորտի ճյուղերը	1
		Ինքնուրույն աշխատանք > *Գծապատկերեք սպասարկման ոլորտում ընդգրկվող ճյուղերը: Դրանցից ո՞ր ուղղությունն է ձեզ առավել հետաքրքրում և ինչո՞: Ձեր կարծիքով Հայաստանում այդ ուղղության զարգացման համար ինչ քայլեր պետք է կատարվեն: Ինչո՞ւ է կարևոր տեղեկատվական տնտեսությունը*	1
17	-	**Թեմատիկ գրավոր աշխատանք 2**	

ԲԱԺԻՆ 6. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ			
18	28	- Միջազգային տնտեսական համագործակցություն	1
		Ինքնուրույն աշխատանք > *Միջազգային տնտեսական համագործակցության ինչ ձևեր և կազմակերպություններ գիտեք: Ի՞նչ դեր են կատարում միջազգային կապերն արդի աշխարհում: Եթե դուք աշխատեք կառավարման ոլորտում, ինչպիսի միջազգային կապեր կստեղծեք մեր երկրի և այլ պետությունների միջև և ինչո՞ւ*	1
19-20	-	- Ամփոփում ***Կիսամյակային ամփոփիչ գրավոր***	1
		Ինքնուրույն աշխատանք > *Ուսումնասիրեք Հայաստանի զբոսաշրջությունը: Հայաստանն ինչո՞վ է գրավիչ զբոսաշրջիկների համար: Զբոսաշրջության զարգացման ասպարեզում դուք ինչ նորարարություններ կարող եք առաջարկել: Համեմատեք Հայաստանի զբոսաշրջային ներուժն այն երկրի հետ, որտեղ կցանկանայիք ճամփորդել*	1
21	29	- Հայաստանի Հանրապետությունը աշխարհում	1